

## ԲԱԽԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՌԻՄԵԿԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՏՈՂՄԸ

Ա.

Էջմիածնի (այժմ պետական) մատենադարարանի N 215/155 ձեռագիրը, ի միջի այլոց, ունի մի շատ հետաքրքրական մասնականիար. իշխանական զղեստով մի պատահնի նստած է բարձրաթիկունք աթոռի վերայ, որի կողքին մակազրբուծ է. «Զբարի անուն» և զԱ. մեծացեալ դմիծ պատրոնն զՎախտանգն յիշեցէք ի արք: Նաև զբազմամեզ զծոզս և զծնողմն իմ զՄարդիս և զԹագուհի, և ած. զծեղ յիշէս (պատկ. 1):

Ակսուածքով, վերջից թերթեր պոկուած լինելու պատճառով. հաւանօրէն ամբողջութիւնը առաքեալի թղթերի ժողովածուէր, զուցէ և ամբողջ առաքելական թըղթերի, Յայտնաթեան հետ, որի համար ենթադրութեան հիմքեր ունինք, ինչպէս կը տեսնենք: Այժմ միայն 130 թերթից է բաղկացած:

Զարդարուած է մանրանկարներով, սկսուածքի և լուսանցքի զարդերով, մանրանկարչական տառերով, որ կիլիկեան



Պատկեր 1

Զեռագիրը փոքրագիր է՝  $15 \times 12$  սմ. մեծութեամբ և 3 սմ. հաստութեամբ, կաշէպատ հասարակ կազմով, թուղթ, աջից դէպի ձախ թեքուած բոլորգրով, երկուին՝ իրաքանչիւրը  $10,8 \times 3$  սմ.: Սկըզբում ունի երկու թերթ մազաղաթ պահպանակ՝ լատիներէն զբչութեամբ: Բովանդակութիւնը Պօղոսի թղթերն են՝ յասաջորանով, կիսպատ է մնում Փիլեմոնի

ոճին մօտենալով հանդերձ, պահել է արքեկեան Հայուսատանի արուեստի բնոյթն ու առանձնայատկութիւնները, մանաւանդ ձևերի ու մոտիւների կողմից. մանրանկարչական տառերը թղթերի սկզբում կազմուած են բաւական և ութաձեերի մոտիւներով, զծերի հանդիպման տեղում զնդակներով. զործադրուած է փոշուկի կամ խեցոսկի և ոչ երբեք թերթոսկի:

Հասմայեցւոց թղթի սկզբում Յիսուսի օղակների և կահթերի մօտիւներով: պատկերն է  $12 \times 7,2$  սմ. մեծութեամբ (պատկ. 2), նստած բարձրաթիկունք առ 123 ա. նկարուած է հիմքում մի աստիճան:



Պատկեր 2

թռուի վերայ, ծածկուած երկարաձիգ բարձով և զարդարուն լաթով. տունիկայի վերայից ձգել է ուսերին մեծ, մոյզ մանիշակաղոյն տոպայ, որ ձախ թիւի վերայով իջնում է ցած, ծածկում ծնկներն ու ուղքները. կրծքից և ոտների մօտից երեւում են տունիկայի գեղեցիկ ծալքերով մասերը, իսկ թեսերի տակից ներքնազգեստի ոսկեզօծ, նեղ թեզանիքը: Ունի բոլորակ և խաչազարդ նիմքուս. զլիսի խիստ և կինեմոնազոյն մազերը ճակատին երկուսի բաժանուած, իջնում են դէպի ուսերը: Դէմքն ամբողջական է, կինեմոնազոյն, թեթև մօրուքով. մեծ աչքերն ինքնամփոփ և մտածկոտ արտայայտութեամբ. զլիսի երկու կողմից «Յս» և «Յս» զբուած, կոսպոյտի վերայ սպիտակ զծերով. անզ խաչակնքում է և ձախում ոսկեզօծ փաթոյթ բռնել: Պահուած է բիւզանդական արուեստի մէջ ևս ընդհանրացած ձեւակերպութիւնը, բայց դէմքը արկելեան: Պատկերի վերելի մասում ոսկեզօծ մեծ ազեղը երկինքն է ձետցնում: Թուղթն ունի եւ ոկուածքի և լուսանցքի զարդ, եւատերեկի, արմաւենիկի եւ թեթև հիւսուածքի մօտիւներով (պատկ. 2), իսկ պատահանրանկարչական տառերը արմաւենիկի կոնտուրի վերայ ութածեւերի:

նով մատուռ գոյնզգոյն քարերից (պատկ. 3) 6,50 սմ. մեծութեամբ, ուշագրութեան արժանի, որ գմբեթի այս ձեռով արկելեան Հայաստանի մանրանկարչութեան մէջ հընագոյններից մէկն է. գմբեթը սրածայր է, նեղ թմբուկով, որ մեր մանրանկարչութեան մէջ յաճախում է ժԴ. զարի ա-



Պատկեր 3

ուաջին քառորդից, ինչպէս օրինակ Դլառ ձորի զպրոցի թորառ Տարօնեցու զործերի մէջ. ծագմամբ հեռաւոր արևելքից, Հաւանօրէն մոնղոլական պետութեան ժամանակ մեզ եկած: Նոյն թղթի թ. 11-12 համարի հանդէպ լուսանցքում Քրիստոս, որդէս քահանայապետ, յաւնական եղիշեկոպոսի զգեստաւորութեամբ՝ Ամիսիորոնով, աւետարանը կրծքին սեղմած և աջող խաչակնքելիս գէմքի արտայայտութիւնը խոզաղ, աչքերը խոշոր, զլուխն առանց սուզուարաի, փոքր ինչ եղծուած:

Նկարուած են և Պօղոսի պատկերները այլ և այլ զիրքերով, 32 ա. 73 ա. և 80 թ., վերջնը, (պատկ. 4) երեսի վերայ



Պատկեր 4

տեղից դուրս է գալիս աղաւնակերպ Ս. Հոգին, բերանից ճառագայթներ ու զղուած զէպի հեղինակ առաքեալը:

Զարդերից յիշատակելի են պարիկ 126 թ. կրկին զլառվ և կրկին զոյզ սաներով արձիւ<sup>(\*)</sup> 5,50 սմ. մեծութեամբ, պարանոցը և պոչը զոյզ զծերով մանեկաւորած, 128 ս. (պատկ. 5). աղաւնաւ նմա-



Պատկեր 5

Նութիւն բերող մի ուրիշ թաշուն՝ պարանոցն ու պոչը զարձեալ մանեկաւորած 113 թ. (պատկ. 6) 6,50 սմ. մեծութեամբ



Պատկեր 6

ընկած, զարձի տեսարանը, տարաբազզար վատ պահուած վիճակում. ամբողջ երեսը  $15 \times 12$  սմ. մեծութեամբ: Երկինք ձեւացնող կիսաշրջանից երեւում է զուրս եկած մի ձեռք, որից երեք կարմիր ճառագայթներ իջնում զէպի Պօղոսը՝ «Աւուղ, Սաւուղ, զի՞ հալածնս զիս» վերտառութեամբ: Երբ. թղթի սկզբին՝ 114 ս. Պօղոս նստած է սոկեզօծ, երկարածիկ բարձով (մութաքայ) բոլորակ աթոռի վերայ, աւետարանիչներին յատուկ զգեստաւորութեամբ. անկիւնում երկինքն է, որ-

(\*) Այդպիսի արձիւների մասին տես մեր «Խաղակեանը», եր. 177:


գարդի հետ։ Ապա ուրիշ գարդերի հետ լուսանցքում կան բոլորակներ՝ կանթերով և օղակներով, որոնցից մէջի մէջ կարդացում է 49ր. «պարոն վախու...», մետածը եղծում է 88ր. պար(ր)ոն վաղթ(ան)զ (որդի Ռւմե)կայ(\*), և 120ր., որ ամեններն չի կարգացում։ Զարդերը եւ մանեկաւորթուչները սասանեան աւանդների և արեկեան Հայաստանի հին արաւեստի զրոշմեն կրում։

Բայց ամենից կարեւորը վախուանդի մանրանկարն է, 106 ա. 12,8 × 4 սմ. մե-

ծութեամբ (պատկ. 1 էլ. 7) (\*\*), որի մասին յիշատակեցինք վերև, պատմուկանագդագրական նշանակութեամբ։ Պատմանի անմոռուք վախուանզը հստած է բարձր պատուանդանով և բարձրաթիվունք աթոռի վերայ. աջ ծնկան դրել է կազմած, բաց աւետարան, Պուկասի սկզբնաւորութեամբ. «Քայնզի իր ուժի քիչ աւել»։ Թերթերի եղրները ուսկեցօծ։ Իշխանը հագել է մանիշակագոյն, գեղեցիկ ծալքաւորում, երկոր, բիւզանդական տաճնիկայ, որ համառում է մինչեւ ոլոքները. օսմիքը, կուրծքը եւ ներքեի քզանցքները ոլորտապոյտ, պարզ արմաւենիկի ոսկի զարդով. մէջքը սեղմուած ոսկի քամարով. Թեկերը բազուիների մօտ սեղմած՝ սոկեզարդ թեզանիքով. արմաւենիներից վեր մի մի ժապաւէնածե կազմ թենին, սկ ֆոնի վերայ եռանկիւնածե, զիկ զակ ոսկեզարդով, որ իշխանական նշանն էր։ Զարդարուն են եւ ծնկները։ Գլխին զրել է՝ զազաթը քիչ բարձր եւ սրածայր՝ զըլսաւորկ, բացուածքի շուրջը և արտաքին կողմը սուկեճամուկ, յետեկի կողմից սկ ու ոսկեզոյն ժապաւէններ կախուած. զիսարկի կողքից մի մասը փչացած է պատկերի մէջ։ Կոշիկները են, սրածայր եւ տոանց կրունկի. զարշապարի մօտից, կողքներից, զոյգ սպիտակ զծերի մի զարդ բարձրանում է մրնչե ճիտկերի ծայրը, նոյն զծերով որոշուած են և ոտքերի թաթերը՝ ոլոքի մօտ երեսի կողմից։ Դէմքը նուրբ է, տոանց մորուքի եւ ընչացքի, քիչ դէպի աջ թեքուած, գեղեցիկ և փոքր բերանով, սրածայր քըլթով, աչքերը խաղաղ և խոչըր, ունչքերը բարուկ և կամորածե, ականչներից օղեր կախուած, այսերի կեղրունն թեթե կարմրութեամբ. ընդհանուրը լուրջ և տիսուր արտայայտու-

(\*) Փակազմի մէջ դրուածները մենք ենք լրացնում մասցորդներից դատելով։

(\*\*) Պատկեր եօթը լուսանկարուած է Ախիկեանի ծեռորդ զունազարդ, մեծացրած օրինակից, որ պատրաստել ենք մեր մանրանկարչութեան աշխատանքի համար։



Պատկեր 7

թեամբ, մազերը կինեմանագոյն և երկու փոքրիկ փնջեր զլսարկի տակից ճակատի վերայ իջած : Զեռքերը նուրբ են, բարակ և երկար իմասներով . աջով բանել է ծնկանը դրած աւետարանը վերեւի կողքից, իսկ ձախը զրել զրքի երեսին : Բնդշանուր զգեստաւորութեամբ նման է Խորթլու բռւզոյի : Սաղուն աթարէզի որդու որմանկարին՝ Հազբատի հարաւային պատի վերայ, որի լուսանկարը հրատարակել է ակագեմիկ Մառը<sup>(\*)</sup>, իսկ զունազարդ արտանկարութիւնն այժմ գտնում է Երեանի թանգարանում:

Նետաքքը բրական է նոու բարձրաթիկունք և զարդարուն աթոռը, որի վերայ նստած է, աթոռի տակ փոռւած է զարդարուն զորպ(?) . տեսանելի են երեք ոտները : Նստողի ոտները զետնի վերայ չեն, այլ աթոռի խորութեան մէջ, կարծես կախուած : Ներքեսի մասի առաջնահայեց կողմը զարդարուած է ճազերի շարքով, ինչպէս սովորական է պատշգամբների համար : Աւելի բարձր նստելու աեղն է երկարածիզ, ոսկենամուկ բարձով և սածածկուած զարդարուն լոթով, որի վերայ բազմած է պատանի Վախտանցը : Մէջքի մասը ծածկուած է կանաչ գոշտի վերայ սև խաչանիշներով զարդարուած կտորով . վերին անկիւնները օսկեզոյն սրտածեերի մէջ ենատեսերեւի օրնամենտով : Թիկունքի վերին անկիւններում մի մի չըշանակով եղերուած նեղ և երկար լուսամուտ, իսկ ճակատին ձգուած է զարդարուն ասխտակ, զլսին բոլորաձև գմբեթ, շրջապատուած աւելի փոքրիկ գմբեթիկներով, որոնք նոյնպէս փոքրիկ լուսամուտ, իսկ ճակատին գուցէ և իբրեւ զորգ : Մի խօսքով իշխանական մի փառաւոր գահոյք է, զուցէ և նմանութեամբ եպիսկոպոսկան աթոռների : Արդէն առզ. մեծացեալ մեծ պատրոն» վերտառութիւնը պարզ ապացոյց է, որ նորա վերայ նստող Վախտանցը իշխանական ծագում ունի :

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈՒ. ՅՈՒՍԻՔԵԱՆՑ

Շարունակելի

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Ժ. Քրիստոնեական արունեսր, Քրիստոնեական գրականութիւնը :

Քրիստոնէական նախկին սերունդներուն համար՝ իրենց արտեստագիտական յզացքը արտայայտելու նախլնտրուած միջոցն էր որմանկարը : Այս մարդին մէջ աւ քրիստոնէութիւնը նորութիւններ մացնուց : Իր արհեստաւորներուն զեղագարգուած նրբանցքները և սենեակները շատ անզամ անթերի ճաշակի և վայելչութեան զարդարանքը ստացան, ինչպէս Փլաւեաններու գետնափորին և Ամազիատոսի գամբարանին մէջ, որոնք Ազգաքսանդրիոյ՝ Պամպէի և Հոռովմի մէջ սիրուած հիմնագարդերէն (տուի) են ներշնչուած : Բայց այս զեղագարգուածները բացառիկ են, Բ. զարու սկիզբէն՝ քրիստոնէական միտքը զտած է իր փնտուած ճամբան և այն դասը՝ զոր կ'ուզէ տալ զետնագամբանի մը զոյզը շնոււած պղտիկ աղօթարանի մը «Յոյն մատուռային նկարով» : Դասական արուեստը խոր աղքեցութիւն մը զործած է քրիստոնէական արուեստին որգեզբած տիպարներու վրայ . բայց եթէ այս վերջինը չէ այլայլած այս տիպարներուն բնիկ ձեւերն ու զիրքերը, անոնց տոււած է նոր նշանակութիւն մը, որուն ընդհանուր գաղափարն ու մանրամասնութիւնները Սուրբ Գիրքէն են ներշնչուած : Եկեղեցւոյ պետերը ազատ կը ձգէին այս մասին . ո՛չ կը փայփայէին եւ ո՛չ հակառակ կը վարուէին . ո՛յնքան զըրաւուած էին աւելի ծանր հոգերով՝ որ չէին կրնար ուշազբութիւն ընծայել կամ կարեռութիւն տալ աչքերուն առջե կաղմուու նոր արուեստի մը :

Իր արտայայտումին եւ միջոցներուն մէջ երկշու և տանջուած արուեստ : Քրիստոնէութիւնը, եկեղեցւոյ յաղթանակէն առաջ, մէկ հատ ճշմարիտ արուեստագէտ չէ ունեցած : Այս պարկեշտ աշխատաւորներուն շոււարումը երեան կուզայ իրենց բոլոր զործերուն մէջ, երբ հարկ կ'ըլլայ բազմաթիւ կերպարանքներ խմբել հասարակաց շարժումի մը մէջ, զանց կ'ընեն ատիկա, եւ կը բաւականան անձնաւորութիւնները

(\*) X, B. 1912: